

այդ հաւատարմութեան մէջ իսկ կը շեշտուի անոր առաջադիր բնագիրը. — նա չի կարգար Զ.ի հետ «խաւար նմա ոչ եղիւ հասու», այլ Տ.ի հետ «խաւար նմա ոչ յաղքեաց»: Այս ընթերցուածին ծանրակշիռ կարեւորութիւնը աւելի կը կարկառի, երբ նկատի առնենք, որ համեմատական հրատարակութիւններն նոյն իմաստով ոչ մէկ տարբերակ կ'ընծայեն. տե՛ս «Հանդէս Ամսօրեայ», 1935, Թ. 11—12, էջ 591—592: Ազ.ի եւ Տ.ի շօշափման մէկ ուրիշ կէտն է «կեանքն էին», մինչ Զ յունարէնի վրայէն ստրիկօրէն ձեւերով հայերէնի հոգւոյն հակառակ անեղական տէր բային կը զնէ եղակի դիմաւորով — կեանքն էր. այս եւս փաստ մըն է թէ Զ.ի այսօրուան բնագիրը յոյն կաղապարի վրայէն ստրիկական սրբագրութեան մ'ենթարկուած է: Այլապէս Ազ. կը խոտորի Տ.էն եւ կը միանայ Զ.ի հետ. ուստի պարզ է թէ ինքը Աւետարաններն ունի աչքի առջեւ եւ ոչ Համարարբառը, բայց այդ Աւետարանները մեծ չափով ձուլուած են տատիանեան ընթերցուածներով: Ասորական աւետարաններու քննութեան համար նկատելի է, որ Տ արդէն կ'ըմբռնէ տարբեր բաժանումով՝ եւ որ ինչ եղեւ՝ նովաւ կեանքն էին. կիտաղրութիւն մը, որ ասորական ձեռագիրներու մէջ փոքրիկ բացառութեամբ ընդհանրացած է:

Յովհ. Ը. 46. ո՞ք է ձէնջ յանդիմանեաց (տ. ո՞ք է ձէնջ յանդիմանէ) զիս վասն մեղաց: Տ 139, 221. ո՞վ է ձէնջ յանդիմանեաց զիս վասն մեղաց: Ազ. 228. ո՞վ է ձէնջ յանդիմանեաց զիս վասն մեղաց (Ե՛ վասն մեղաց յանդիմանէ զիս):

Լեզուական նմանութիւն Ազ.ի եւ Տ.ի միջեւ. Զ.ի բնագիրը կ'երեւայ շատ հաստատուն չէ:

Յովհ. Ը. 58. յառաջ քան զլինելն Արբազամու եմ ես. նոյն՝ Տ 181, Ազ. 224:

Եփրեմ նաեւ մեկնողական ոճով ունի այս նախադասութիւնը. Մինչ չեւ Արբազամ եղեալ էր՝ ես էի իսկ. Տ. 180. յաջորդ էջը՝ Յառաջ քան զլինելն Արբազամու եմ ես. եւ մինչ չեւ Արբազամ եղեալ էր՝ ես էի իսկ. Տ 181: Կարելի է սակայն որ Տ ունենար վերջին ձեւով, զոր ասորական լեզուին աւելի զիւրին է արտայայտել:

(Շարունակելի): Է. Պ. ԷՍՊՈՒԵԱՆ



ԿԵՆՈՆՆԵՐՈՅ ԶԵԹԵԳԻՐ ՕՐԻՆՆԱԿ ՄԸ Ի ՊԼՈՎԻՐԻ

Ի Պլովզիւ (Բուլղարիա) Պր. Թադէոս Եազըճեանի քով տեսայ Կանոնագրոց ձեռագիրը օրինակ մը, գրուած 1612ին Յակոբ կրօնաւորէ: Ուշագրաւ է Զեռագիրս Կանոնաց նոր դասաւորութեամբ, նաեւ բովանդակութեամբ: Կը համարիմ թէ Զեռագիրս մանր նկարագրութիւնը շահեկան պիտի ըլլայ անոնց համար, որոնք կ'ուսուսնասիրեն հայերէն Կանոնաց Մատեանը: Այս տեղ կը յայտնեմ շնորհակալութիւնս Պր. Թ. Եազըճեանի, որ հաճեցաւ զնեւ Զեռագիրս տրամադրութեանս տակ ցուցակագրելու համար: Նկարագրութիւնն է.

- ԹՈՒՂԹՔ՝ 225: — ՄԵՏՈՒԹԻՒՆ՝ 21 X 15 հմ.:
- ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին 16 X 11 հմ.:
- ՏՈՂՔ՝ 22:
- ՆԻԻԹ՝ բուրբ ողորկ, դեղնագոյն: — ԿԱՁՄ՝ փայտեայ կաշեպատ. գարդարուն փակամէքներն համուած: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿ՝ առջեւն եւ ետեւը երկերկու բուրբ, հատուածներ Աւետարանէն: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ, միացն քղ. 9 կազմէն բաժնուած է: — ԳԻՐ՝ բոլորգիր: — ԶԱՐԳԱԳԻՐՔ՝ կամոնական հատուածներու սկիզբը, կարմրագիր: — ԽՈՐԱՆ՝ քղ. 3ա, ոչ յաջող: — ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԳՔ՝ պարզ կամոնական հատուածներու սկիզբը: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1611/12: — ԳՐԻՉ՝ Յակոբ կրօնաւոր: — ՏԵՂԻ՝ հաւանօրէն Կ.Պոլիս: — ՏԵՐ՝ Մէլիքաի որդի Մուրատ Ձէլէպի: — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝ քղ. 212բ, 223ա: — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ՝ պիմեան տերն է Պր. Թադէոս Եազըճեանի Պլովզիւ:

Մատեանս է Կանոնագիրը. կը բովանդակէ.

1. Թղ. 2ա. Յանկ Կանոնաց (առանց խորագրի):
2. Թղ. 3ա. Ա. Յառաջարանութիւնը առաքելական Կանոնաց:
- 5բ. Բ. Կանոնը առաքելականը: Ի կատարածին՝ Կատարեցաւ Կանոնը առաքելականը: Եւ արդ զայս ամենայն զոր ինչ կարգեցին եւ եղին առաքեալք, ոչ եթէ անձանց իւրեանց կարգեցին:
3. Թղ. 20ա. Կանոնը եւ սահմանը Թադէոսի առաքելոյն:
4. Թղ. 26բ. Կանոնը Փիլիպպոսի առաքելոյն:
5. Թղ. 27բ. Կանոնը զոր եղին սուրբ հարքն զկնի առաքելոյն. զԼ. Ին: Յորոց զօրտակարն քաղեալ եղին հրամանաւ:
6. Թղ. 29բ. Գ. Կանոնը Նիկիականը:
7. Թղ. 33բ. Այլ կանոնը Նիկիական(ք):

8. Թղ. 35ա. Անկիւրիոյ կանոնք, զԼ. Ի:
9. Թղ. 37բ. Կեսարեան կանոնք, զԼ. Ժ:
10. Թղ. 39ա. Կանոնք Նիոյիկեսարոյ, զԼ. Ի:
11. Թղ. 41ա. Գանդրոյ կանոնք, զԼ. ԻԳ:
12. Թղ. 45բ. Անտիոքայ կանոնք, զԼ. ԻԳ:
13. Թղ. 48բ. Դարձեալ նոցին կանոնք երկրորդ. Կամ եղեւ մեծ ժողովոյն եթէ յեկեղեցի ըրաճականս արկանել եւ հաց ուտել եւ խրախուսն աւնել:
14. Թղ. 49ա. Ղաւոզիկեցոց կանոնք (զԼ.) ԺԵ:
15. Թղ. 52ա. Սարղիկէ կանոնին զԼ. ԻԱ:
16. Թղ. 53ա. Կոստանդնուպոլսի կանոնք Գ:
17. Թղ. 53բ. Եփեսոսի սուրբ ժողովոյն կանոնք Զ:
18. Թղ. 54ա. Դարձեալ նոցա այլ կանոնք ԺԶ: ա. «Աստուած անէծ եւ նշովեաց ի բաց կացէք յարիւնահեղէ: ...»
19. Թղ. 55ա. Նիկիայ սուրբ ժողովոյն մնացորդ կանոն: Վասն այնոցիկ որք յաւձան յանարժանից ըստ անդիտութեան եպիսկոպոսին...:
20. Թղ. 55բ. Հարցմունք պէսպէս եւ պատասխանիք Աթանասի Աղեկսանդրացի եպիսկոպոսի կանոնք Զ: «Ի ժամանակին յայնմիկ երեցաւ այր մի Արիանոս Գորդոս ա նուն...:
21. Թղ. 70բ. Գիր կանոնական մեծի եւ զիտնականի երանելոյն Բարսղի Կեսարացոյ եպիսկոպոսին, զԼ. Ծ:
22. Թղ. 80ա. Դարձեալ Ս. Բարսղի վասն ամենեւին հեռանալու յազգային կին առնելոյ: «Յայսմ իմն առաւել հարկ է մարդ...»:
23. Թղ. 81բ. Գիր կանոնի երանելոյն Եպիփանու Կիլիկացոյ եպիսկոպոսի մեծի եւ ստաքինոյ մարգարէի եւ նշանագործի, զԼ. Գ: «Ի վերայ բազում նշանացն...»:
24. Թղ. 85ա. Կանոնք Ս. Գրիգորի Լուսաւորչին, զԼ. Լ:
25. Թղ. 87ա. Կանոնք Ս. Ներսէսի հայրապետին, զԼ. ԼԳ:
26. Թղ. 88բ. Դարձեալ եւ այս կանոնք յաւուրս Ներսէսի մեծի եւ Ներշապէոյ Մամիկոնէից եպիսկոպոսի, զԼ. ԼԷ:
27. Թղ. 93ա. Ա. Սահմանք եւ կանոնք սրբոյն Սահակայ հայրապետին. Գիր աւանդութեան յազգա կարգի սպասաւորաց սրբոյ եկեղեցւոյ եւ պողոց ժողովրդականաց ընծայելոց Աստուծոյ:

28. Թղ. 96բ. Բ. Մեծ եւ երանելոյ Ս. Սահակայ Հայոց հայրապետի յազգա Գորեպիսկոպոսաց...:
29. Թղ. 99բ. Գ. Կանոն Ս. Սահակայ Հայոց կաթողիկոսի ի լրուսն հաւատոյ ամենայն աշխարհի Հայոց մեծաց, զԼ. ԺԹ: «Եղբարց սիրելեաց երիցանց...»:
30. Թղ. 104ա. Սահմանք եւ կանոնք կարգի Աստուծոյ Ս. Եկեղեցոյ զոր եղին վարդապետք Հայոց ի նոյն լրութիւն առաքելական եւ նիկիական կանոնաց հաստատութեան (= Կանոնք Շահապիվանի ժողովոյն):
31. Թղ. 118բ. Յովհաննու երանելոյն Յովհաննու Իմաստասիրի: «Ընդ որով եւ զայս հաստատուել...»:
32. Թղ. 123բ. Նորին կանոնք ԺԹ: «Ոչ է պարտ յաւուր շարաթու...»:
33. Թղ. 124բ. Կանոնք Մովսէսի քերթողահաւրն. բան հարցանողաց եւ պատասխանիք, զԼ. ԺԵ: Հարցումն Ա. Թէ պարտ է եպիսկոպոսին մինչ յեկեղեցոյ անդի իւրում իցէ...»:
34. Թղ. 127ա. Կանոնք տեսոն Սիոնի Հայոց կաթողիկոսի, զԼ. ԾԳ:
35. Թղ. 128ա. Կանոնք ժամարարաց, իրատք զգուշութեան: «Եթէ ոք ի հաւատացելոց ի Մահմէտի աւրէնս դառնայ իւրովք կամօք...»:
36. Թղ. 132բ. Սրբոց կաթողիկոսաց Հայոց եւ այլ հոգէշահ վարդապետաց կանոնք եւ իրատք զգուշաւորք քահանայից երկիւղածաց մանկանցն սուրբ Եկեղեցւոյ: «Քահանային պարտ է եւ արժան սրբութեան եւ ամբոթեան հաղորդել...»:
37. Թղ. 134բ. Վասն կամոյ եւ ակամոյ գիծութեան կարգ եւ իրատ: «Եթէ ոք յարատ հայեցուածովք...»:
38. Թղ. 136ա. Հարցումն պէսպէս խոստովանութեան բանից եւ պատահմանց եկելոց ի զգուշութիւն. զոր հարցեալ համբակ քահանայ, որոյ անուն Արքայութիւն կոչի, զԳաւիթ ոմն քահանայ զիտնական յոյժ, հարցումն պէսպէս: Եթէ զինչ է որ յարարածս Աստուծոյ ամանք սուրբ կոչեցան...:
39. Թղ. 188ա. Սահմանք կանոնական Ս. Եղիշայի առ ի իրատս ամենայն որդւոց մարդկան: «Յայտնի է զի գոն դիւահարք...»:
40. Թղ. 191բ. Աստիճանք աւրինացս Ներսէսի Հայոց կաթողիկոսի արարեալ: «Ընթեանլով իմ զիրատ աստիճանաց...»:
41. Թղ. 194բ. Ամենայն առաքելու-

թեամբ զարդարեալ... անն Աստուծոյ Յա- կոր վարդապետի Դրիմեցոյ ասացեալ յաղագս ազգականութեան: «Գիտելի է զի ազգակա- նութիւն...»:

42. Թղ. 205ա. Հարցումն ուսումնասի- րաց եւ պատասխանիք սրբոց վարդապետաց: «Քանի՞ են գործք առաջին աւուրն: Պր. Արար Աստուած գհրեղէն երկինք...»:

43. Թղ. 213ա. Հարցմունք Ս. Գրիգորի Լուսաւորչին եւ պատասխանի հրեշտակա- պետին վասն հոգոց արդարոց եւ մեղաւոր- րաց: Սուրբն Գրիգոր Լուսաւորչին մեր եմուտ ի սենեակն յեկեղեցոյն...»:

44. Թղ. 223բ—226բ. (տարբեր գրիչ, նոտագիր, առանց խորագրի). «Առաջին սրբութիւն մարդոյն խոստովանութիւն է...»:

ՅԻՇՏԱՅԱԿԱՐԱՆՆԵՐ.

1. Թղ. 212բ. Փառք ամենասուրբ երրորդութեան հօր եւ որդոյ եւ հօգոյն սրբոց այժմ եւ միշտ եւ ան- զբաւ յաւիտեանս ամէն: Կանոնական սահմանադրու- թեանց զլրումն ուղղաճեմ հաւատոցն, զոր ի հօգոյն սրբոց ընկալեալ հարցն եւ հայրատեալացն յարդարեցին մեզ ճանապարհ կենաց, առ լուսաճեմ կենան օթէվա- նիւ ըրորեց մարդկան կազմեցին զեզ կենաց համարէն վերաւորեցս մեհօք: Չոր մեծաւ ցանկութեամբ սի- բեցեալ սեռն սիրով, սրտի մտօք զիժեկարանս զայս հո- զոց, ես անարժանս եւ անպիտանս ամենայնիւ Մեղիք- շայ որդոյ Մուրատ չէլեպիլին գրել տուի իմ հալալ ըն- շեց ի վայելումն անձին իմոյ եւ որդոյ իմոյ եւ յիշա- ատկ ծնողաց իմոց. ով որ կարդայ եւ օգտի ի սմանէ. յիշեալիք զվերոյ գրեալ զՄէլեքան, եւ զծնողս իւր, զհօգեւոր եւ զմարմնաւոր եւ զամենայն յազգայինս, զկենդանին եւ զնշնեցեալսն, ամէն: Արդ գրեցաւ սոց ի թվականն Հայոց ՌԿ եւ յամենան Մարտի Լ. աւր- շարաթ. ի ձեռն թերաւարժ եւ յաքնամեղ Յակոբ սղա- ւորին եղև սկիզբն եւ աւարտումն. մաղթեցէք վասն իմ, ով հանդիպողք, առ Տէր եւ յիշեցէք ի բարին եւ զուք յիշեալ լիջէք յարքայութեանն Աստուծոյ:

2. Թղ. 223ա. Գրեցաւ թղ. ՌԿԱ. Ապրիլ ամսոյն իթ աւրն Դշի. Որ սղորմի զըշի զրոցս անարժան եւ անպիտան մեղաւոր ծառայիս Աստուծոյ սուտանուն Յակոբ կրօնաւորիս, աղաչեմ զձեզ մեղաց իմոց եւ անցանցս թողութիւն խնդրեցէք ի Տեառնէ եւ ծնօ- զացս եւ մեր ուսուցանողացն Աստուած սղորմի սաս- ցէք. եւ ինքն որ առատն է ի տուրս բարեաց, սղոր- մեացի ձեզ եւ մեզ, ամէն, Հայր:

3. Գանդրայ ժողովոյն կանոնաց ետեւը (Թղ. 45բ). Ազաչեմք զսուրբ ընթերցողքս անմեղադիր լինել սզալանաց գրիս եւ անարճեստութեանս, զի կար մեր այս էր. ողջ լերուք:

4. Առջեւի մաղաղաթեայ պահպանակին երկրորդ էջին վրայ տեղի նոր գրով. ՌԿԶ թվին տոյ Յովանես կաղաղիկոս պուրբարի գիրք տան. Արբ տան: Արբ այ հոգու մէտար հաղորդ. յուշ անհաղորդ. տաւուլ տոյ պիրլայ սիվ:

5. Թղ. 1ա. Բիւրիպոս կաթաղիկոս ա(ւ.)րհնութիւն

ին տոյ ի թուրիանէն եալ մի զպլոց վիճակոց ձեռ- նագրեցեն նգովեալ եղիցի ի կանս եւ ի մահ:

6. Թղ. 2ա. Սուրբ էջմիածին նվիրակի Խաչատուր վարդապետի պուրբարի Ա. աստմ օլտակեայ խաղոր- զալայք ըլայ տակաբի տոյ հոգիմէր արան կազակի մահ յուլայ անհաղորդ տա կուլ Ուլանէս կաթաղիկոս տահի սլոլայ տէտի թվին ՌԶԳ տոյ էջմիածին նվի- բակի Մինաս վարդապետ անկարծակի մահ կալտոյ Գ. ըլայ տական հաղորդ տակ ու շոլայ սիվ:

7. Թղ. 226ա. Ետեւի մաղաղաթեայ պահպանակ- ներուն վրայ, աւետարաններու գրութեան միջեւ, տեղի նորագրով. Ես էճի (հաճի՞ր) Մեղիկչաճ Մուրատ շա- լալին որդին ի թվականութեան Հայոց ՌԶԸ ունովա- ըին ԻԸ տոյ աւուրն աւրն Ուրբարու վասն մահուան իմոյ կտակ սահմանեցի աւուր կենդանութեան իմոյ բերանով իմով խաւեցայ եւ քահանայսն զրեցին ի հոյ- բարտութեան Տեառն Տէր Փիլիպոս կաղաղիկոսին սուրբ էջմիածնայ եւ ի պատրեաքութեան Տէր Զարա- ըիկայ քաջ բարունայտեալսն Կոստանդնուպոլսոյ, ա- ռաջնորդութեամբ երուսաղէմոյ Տէր Գրիգոր արհիե- պիսկոպոսին եւ ի սեղապապահութեան մայրաքաղաքիս Տիրոյմայր սուրբ Աստուածածնի վանացն ծառայ ըստասուրբին նուստ, Գարբէլ Լանն սահմանեցի ես սկեալ (°) ծերունի հաճի Մեղիկչայ որ ես մահուան իմոյ ով ոք ժառանկոր(դ) լինի ընչից իմոյ թէ տուն թէ ճանտարայ թէ յայդի ի յայտ ընչէս ես կղիական պա- հոյ քոստունս պատարազ կատարին հոգւոյ իմոյ հո- զեւոր եւ մարմնաւոր ազգականաց իմոց տարին անգամ մի ես կատարման պատարազաց Բ. ոչխար զենցեն մասնակից լինել ժողովրդեան. փոխան արհնեցից սաղմոսին աստուած անեղ սասցեն հոգոյ հանգուցե- րայ մասին աստուած անեղ սասցեն հոգոյ հանգուցե- րայ, աղաթք Գրիստոս որդի, Հայր մեր որ երկինս, ամեն տարեկից Զատիկ է, ի Զատիկ եկեղեցոյ մեկ այրեալ կուլ տան վասն Աստուծոյ մատաղին, զայս բանս կատարեն, որչափ ժառանկորդ կենդանի են որ- զոց որդիս վկայ այսմ բանիս աչր Խաչայտուր, տէր Կիրակոս, տէր Գրիգոր, տէր Սփ (?) ամենայն քահա- նայք եւ ես նստարս պաշտօնեայ Գրիստոսի հաճի Մեղիկչաճ եւ խնդրանս լինի ձեզ ով քահանայք եւ պաշ- տօնեայք վրէժ ինդիր լինիս վասն կտակիս...: (Մնա- ցածն անկարեւոր եւ մասով մըն ալ գրիթե անը- բունի):



Հ. Հ. ՈՍԿԵՍՆ

ՍԻՄԵՆՆ ԽՐԸՄՊԷՏԻ ՈՐԳԻՆ ԿԵՓԵՏԻ ՏԵՂԵԱՅ

Սիմէննի կենսագրութեան քիչ բան ծա- նօթ է մեզի: Ծննդեամբ Կաֆացի էր, որդի Սրբմայէլի (Սրբմայէլի): Ապրած է Կաֆա քաղաքը. «Սիրուն է վարդը» տաղին վերջի տողը՝ «ձգէ կօշիկ կարեն» կը թելադրէ մեզի հետեւցնելու թէ անիկա կօշիկաւոր էր արու- ետով: Իր գործունէութեան շրջանը կ'իյնայ ժի. զարու երկրորդ կէսին. ունինք իրմէ տաղեր, որոնք գրուած են 1683, 1685 եւ 1686

տարիներուն: Իր մտերիմներու շրջանակին կը պատկանին Յարութիւն վաճառական, Յա- կոր Զահրնկալ եւ Սրապիոն, զոր եղբայր կ'անուանէ: Ողբը, զոր գրած է Սիմէնն Խա- սայէկ երէցի մահուան առթիւ, ենթադրել կու տայ, որ Սիմէնն Խասայէկի մտերիմ ծանօթ- ներէն, թերեւս նաեւ անոր աշակերտներէն եղած ըլլայ:

Սիմէնն երգած է զանազան տաղեր, պարզ, հաճելի ոճով եւ ժողովրդական նկա- րագրով: Անոնցմէ մին՝ «Խոսկական...», յօրե- նուած է սոյ մը հայերէն եւ սոյ մը թաթա- րերէն:

Կը բաւականանամ հոս թուել Սիմէննի տաղերը, որքան ծանօթ են ինձ անոնք: Նկատի ունիմ զլուսաւորարար էջմիածնի թ. 1636 (ժի.ժԸ. դար) եւ թ. 2394 ձեռա- գիր Տաղարանները. վերջինս նոյն է Կոստա- նեանցի 1682 տարւոյ Տաղարանին հետ:

1. Նորին Սիմէննի ասացեալ: Եկ պիւրպուրում զարնանային, ձայն աւետեաց բեր, բեր... Տունք՝ ԵՐԳ Ի ՍԻՄԵՆՆԻ: Ձեռ.՝ էջմ. 1636, 91բ—92բ: 2394, 211ա:
2. Ի վերայ մահուան խասպէկ ֆահաւայի, ասացեալ ի Սիմէննի խոսակցի օղլը կո- չեցիլոյ: Եղև ահա այսօր ժամանակ ողբոց, Սուգ, արտմութիւն եհաս ամենայն տիւրոց... Կ. իր թրվական Հայոց ըմա, ձէ եւ Լիւն Եւ Եշիւրն խառնեալ հոլովեալ ի ձեւ Եւ հուկ Գիւտի Խաչին վաղճանըն եղև. Շնորհեցէք Հայր մեղայն հոգուն իւր պարգև: Տունք՝ ԵՐԳԵԱԼ Ի ՍԻՄԵՆՆԻ: Ձեռագիր՝ էջմ. 1636, 102բ—104բ: Հրատ. Հանդ. Ամս., 1935, էջ 343—344:
3. Նորին Սիմէննի այս: Իանց ցուրտ եւ ձմեռն եւ վիշտն աշխարհի, Զարեգակն եմուտ ամպրոպայն երկինի... Կ. ըմա, ձէ, Լիւն, Դայ է թիւ թրվականիս, Երբ յանդ երկալ եղև երգ Սիմէննիս, Ի խնդրոյ Յարութիւն վաճառականի...: Տունք՝ է ՍՍ. ՍԻՄԵՆՆԻՍ: Ձեռագիր՝ էջմ. 1636, 98բ—101ա:
4. Անխրագիր: Ինձ ունին դիր աստանօր, բարբառիմ առ քեզ...

- վ. Սրբմայէլի որդի, մեղք ունիս անթիւ...: Տունք՝ Ի ՍԻՄԵՆՆԻ: Ձեռագիր՝ էջմ. 1636, 95ա—96ա:
5. Նորին Սիմէննի ասացեալ: Խոսկական գերարուն լուսոյն անթարգման. Մատէրի խասիսէն եօխ սանկայ էխրան... Տունք՝ Ի ՍԻՄԵՆՆԻ: Ձեռագիր՝ էջմ. 1636, 89բ—91ա:
6. Խրմայեկի որդի Սիմէննի առ Ս. Աս- տուածածին: Խորան լուսազարդ հայրական Բանին, Շրնորհօք լրցեալ փառակից Հոգին... Կ. իր այս ժամանակի թիւ թրվականիս Տումարի մերում արամեան սեռիս, Ռ եւ ձ. Լ երկուս (1683), Որժամ անդ ելաւ երգ Սիմէննիս: Տունք՝ ԽՐԸՄՊԷՏ ԱՒԳԼԸ ՍԻՄԵՆՆԻ ԲԻՎԵՏՈՅ ԵՐԳ Է: Ձեռագիր՝ էջմ. 1636, 85ա—89բ:
7. Տաղ ի խնդրոյ փոքրագոյն մանկան Յա- կոբայ Զախրնկալի: Սէր քո ահեղ անտանելի Անկաւ ի սիրա իմ այսօր... Կ. Թիւն է Հայոց ՌձԼ եւ չորս աստանօր: Տունք՝ ՍԻՄԵՆՆԻ: Ձեռագիր՝ էջմ. 1636, 92բ—94ա:
8. Տաղ վասն ուրախութեան: Սիրով ուրախութեան ժամ է գիտացիր, ձեմեղով եկ ինձ մօտեցիր... Կ. Սրբմայէլի որդի կոչեալ Սիմէնն...: Տունք՝ ՍԻՄԵՆՆԻ: Ձեռագիր՝ էջմ. 2394, 212ա (= Կոստա- նեանց, Տաղարան 1682). Կոստ. Տաղարան 1695ամին. Թերի: Հրատ.՝ Բաղմայէլ, 1884 էջ 34 (Թերի): Կոստանեանց, Նոր ժողովածու, Ա., '60—61 (Թերի, 1695ի Տաղարանէն եւ Նոր ժող., Գ., 54—56 (հմտ. էջ Ե):
9. Տաղ Սիմէննի ասացեալ: Սիրուն է վարդըն ի մէջ ծաղկանցն ամենի... Կ. Սրբմայէլի որդի տե'ս ի՞նչ ասացաւ, Զըգէ կօշիկ կարեն, ահա մահ հասաւ: Տունք՝ ՍԻՄԵՆՆԻ: Ձեռագիր՝ էջմ. 2394, 216բ—219բ: Պա- րիս Ա. Անտոնեանի սեպհական Տաղարան, թղ. 148ա (1695):